



Խ Ա. Զ

Դ Ա. Մ Բ Ա. Բ Ա. Ն Ի

Հ. ԱՐՍԵՆԻ ՍՈՒՔՐԵԱՆ

ՎԱԶԱՄԵՌԻԿ ՎԱԽՃԱՆԵԼՈՅ՝

Ընդ հովանեաւ քո սուրբ թեոց, աստուածակիր ուժ փայտ կենայ,
Բազկօք պարդեալ քոյինատիպ յանդորր 'ի քուն խաղաղակեաց,
Երկնահրաւէր ազգմանդ 'ի կոչ, առ ոտն հարեալ ըզյոյս եւ սէր՝
Ընդ ցուրտ հողով գերեզմանիս վաղաթարշամ հանգչիմ՝ յոսկեր,
Մխիթարեան Հայր Արսէն Սուքրեան:

Բիւզանդական ափանց ծընունդ յԱնդրին վարժեալ 'ի ծոց անոյշ,
Ի մանկական անկեալ տիոց ըզքեզ զուսովքս ածի քընքոյշ,
Ի սէր քոյին բոլորանուէր, պոհարանիդ ժիր պաշտօնեայ,
Ի դրախտ հովտիս ըզքեզ գըտեալ ինձ ծառ կենաց եւ ոչ դժնեայ.
Սմենայաղթ ուժ Սուրբ Խաչ:

է Փոխեալ առ Տէր յՂօգոստոսի տարւոյս 'ի Կ.Պօլիս, երեսնամեայ, 'ի ցաւ և
կսկիծ համայն եղբարց իւրոց կրօնակցաց, ազգակցաց և ծանօթից մերազնեայ և
օտարաց իսկ, որոց սկսեալ էր լինել ընդել, բազում հմտութեամբ իւրով հայկաբա-
նական և յունական լեզուաց: Ի Բաղմալիայիս աստ և անդ սփռեալ հատուածք նո-
րին ներհմտականք, և փոքրաթիւ թարգմանութիւնք, շատ իսկ խօսին թէ որպիսի
չրիւք և բարեմասնութեամբք ճոխացեալ էր, և որոմ ակնկալութեամբ յԱլիստիս մե-
րում և 'ի մատենագրութեան յապագայս 'ի միտս գիտողացն հանդիսանայր հանճար
նորին: Տարածամ օրհաս՝ ցնդեալ անհետ արար դրեաւ, և ամենայն արտասուք
և ամենայն բանք սիրայորդորք, աւաղ, և ոչ ստուերակերպ անգամ զարթուացեն 'ի մեզ
յաստիս զյաւիտենիցն 'ի մէնջ 'ի բաց սրացեալն զյոյս վայելելոյ 'ի նմա:

Ըզմայլեալ երգոցդ 'ի նուազ, 'ի հառաչանս եթերընթաց
Զոր մարգն աստուածային անդ 'ի մահուն 'ի քեզ կարգաց,
Ըզլուսայից լըբի հրաւեր, առ քեզ եւ զաչս իմ կառուցեալ՝
Զաղխեցի զքիար եւ բամբ. 'ի պահ ոսկերցս 'ի քէն կերտեալ
Աստուածազէն ինձ Սուրբ խաչ:

Արդ 'ի մույլ մահու հովտէս՝ ուր բաց 'ի քէն ոչ այլ ընկեր
Գերեզմանիս իմ լըբելոյ հըսկէ անքուն տիւ եւ գիշեր,
Պաղատիմ հառաչանօք լինել թեւօքդ ինձ հովանի,
Որպէս զուարթնոցդ յարաթռելոյ յաստուածընկալ քում տապանի,
Երկնից ուղի ով Սուրբ խաչ:

Ո՛հ, թէ երբեք ինձ շնորհէր պահ մի թողուլ զայս լուռ դամբան,
Գանի՛ փութով շուրջ յածէի պսակել ըզքեզ 'ի վարդ շուշան,
Թոր գորովեալ արդեօք եւ սիրտ մի սիրելեացն յողբ եւ 'ի ցաւ
Շիթ մի եւ յիմ ոչ զըլանայր յառոյդ հասակըս կենազրաւ.
Այլ դու ինձ կեանք՝ ով Սուրբ խաչ:

Տայր որ յանկարծ ինձ նըժգեհիս 'ի նըլխարաց իմ անձկալեաց,
Զոր բացական յօտարութեան հանգուցին ձեռք թէ եւ զըթած,
Ի յօստանս այս սըխրալի կացեալ երբեմն ինձ հայրենի,
Վարել զոսկերս իմ 'ի վէհէ՛ խառնել յեղբարցս ոսկերոտի,
Երագահաս ով Սուրբ խաչ:

Մի անպաճոյճդ այդ կերպարան բարձցի երբեք 'ի ցուրտ հողոյս,
Մի պարագայք ամանակաց խիսցեն երբեք զայն 'ի ծոցոյս.
Ի հոլովել աւուրց, 'ի գալ անեղադոչ սուրբ հրեշտակին,
Տեսեալ ըզքեզ՝ ցընծացուցէ զոսկերս 'ի պահ քո նըշանին,
Ո՛վ յարուցիչ դու Սուրբ խաչ:

Յայնժամ զարթո՛ զիս ընդ եղբարս երամովին թըռչել թեթեւ,
Թորժամ եւ դու 'ի սեպհական փոխիս 'ի լոյս յանվիրջ արեւ.
Ի ըյս 'ի լոյս առաջնորդեա սըրբոց պարօք յերկնից դարաստ,
Ընդ ըզդաստիցըն մըտանել սուրբ փեսային 'ի յառագաստ,
Երկնամբարձիկ ով Սուրբ խաչ:

Հ. Մ. Ն.